ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ m.aprikyan@prosecutor.am

N 44/9-1-24

10. 01. 2024թ.

«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ
տնօրեն Ռ. Դանիելյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

ՀՀ դատախազության և «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 07.12.2023թ.-ին կնքվել է N ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21-2 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, պայմանագրի N 2 հավելվածով՝ Մատակարարման ժամանակացույցով սահմանված ծավալով, ժամկետում և հասցեներով, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև միակողմանի լուծել

պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազության և «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 07.12.2023թ. կնքված ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21-2 ծածկագրով պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման Պատվիրատուի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Մ. Ափրիկյան